



Էմմա ԱՎԱԳՅԱՆ

ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի քրեական դատավարության և կիրառական իրավագիտության ամբիոնի հայրերի

ԽՈՇԱՆՊԱՆ ՊՈՐԾԵՐՈՎ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ ԵՎ ՆՐԱՆՑ ԱՆԿԱՄՈՒԹՅՈՒՆԸ

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (այսուհետև՝ ՄԵԳ) նախադեպային պրակտիկայի, Եվրոպայի խորհրդի խոշտանգումների կանխարգելման կոմիտեի (այսուհետև՝ ԽԿԿ) գեկույցների, ինչպես նաև Ստամբուլյան արձանագրության ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ խոշտանգումների կամ վատ վերաբերմունքի այլ ձևերի քննության արդյունավետությունը գնահատելու համար մշակվել են որոշ չափորոշիչներ: Այսպես, քննությունը պետք է իրականացվի՝

1. անկախ և անկողմնակալ մարմնի կողմից,

2. անհապաղ,

3. ամբողջական/ բազմակողմանի,

4. ապահովելով գոհի (տուժողի) ներգրավվածությունը և հանրային վերահսկողությունը:

Արդյունավետ քննության կարևոր տարրերից մեկն էլ համարվում է անկախության չափանիշը, ինչը սույն հոդվածի քննարկման առարկան է դարձել: Դա նշանակում է, որ քննություն իրականացնող անձը պետք է անկախ լինի ինչպես հանցագործությունը կատարելու մեջ կասկածվող անձանցից, այնպես էլ այն հաստատություններից ու մարմիններից, որտեղ աշխատում են նրանք¹: Որպես քննության անաշտության նախապայման՝ Եվրոդատարանի կողմից առանձնակի արժևորվում է քննություն իրականացնող մարմնի իրական անկախությունը, որը հանդես է գալիս որպես յուրօրինակ ցուցիչ՝ գնահատելու վարույթն իրականացնող մարմնի գործողություն-

ների արժանահավատությունը: Այլ կերպ ասած՝ քննությունն իրականացնող մարմինը պետք է լինի անկախ, զերծ ամեն տեսակ գերատեսչական միջամտությունից: Նշված հանգամանքն էապես բարձրացնում է հանրային վստահությունը քննության իրականացման անկողմնակալության, օբյեկտիվության շուրջ՝ յուրօրինակ սկզբունք-երաշխիք դառնալով նաև մյուս պահանջների կենսագործման համար: Այս պահանջից էլնելով՝ տեղին է հիշատակել գործերից մեկով ՄԵԳ-ի դիրքորոշումը, համաձայն որի՝ (...) Ոստիկանության դեմ բողոքելու մեխանիզմը պետք է վայելի հանրության վստահությունը, այն ոչ միայն պարզապես պետք է լինի անկախ, այլ այն պետք է անկախ լինի ոստիկանությունից: Դատարանը նշել է նաև, որ գործի հանգամանքների սկզբնական ստուգումը կատարվել է այն հաստատության կողմից (Ներքին գործերի նախարարություն), որտեղ աշխատել է վատ վերաբերմունքի մեջ կասկածվողների մեծ մասը (ոստիկանությունը Նախարարության կազմում էր)²:

Անկախության պահանջի մասով ՄԵԳ-ը ձևավորել է նաև հետևյալ իրավական դիրքորոշումը. «(...) որպեսզի պետական ծառայողների դրսևորած ենթադրյալ վատ վերաբերմունքի վերաբերյալ իրականացվող քննությունը լինի արդյունավետ, այն պետք է լինի անկախ: Քննության անկախությամբ ենթադրվում է ոչ միայն ենթակայության կամ ինստիտուցիոնալ կապի բացակայություն, այլև՝ գործնական իմաստով անկախություն»³: ՄԵԳ-ի նախադեպային պրակտիկայի

ՍԵՊՏԵՄԲԵՐ - ՀՈԿՏԵՄԲԵՐ 2019 9 - 10 (243-244)

ԴԱՏԱՎԱՆ
Իշխանություն

վերլուծությունից պարզ է դառնում, որ անկախությունը պետք է համապատասխանի հետևյալ պահանջներին՝

- քննությունը չի կարող իրականացվել այն մարմնի կողմից, որում աշխատում կամ աշխատել են հանցագործության մեջ մեղադրվողները, չպետք է որևէ ծառայողական/աշխատանքային կապ կամ ենթակայություն լինի նրանց միջև⁴,

- քննության տարբեր փուլերում որոշումներ կայացնող անձինք անկախ պետք է լինեն այն անձանցից, որոնց մեղսագրվում է վատ վերաբերմունքի դրսևորումները⁵,

- գործի քննությունն իրականացնող անձինք չպետք է առնչություն ունենան ենթադրյալ տուժողի վերաբերյալ իրականացված քննությանը⁶,

- այն պետք է տարածվի ոչ միայն քննություն իրականացնող և որոշումներ կայացնող մարմինների, այլև այն մարմինների նկատմամբ, որոնք ներգրավված են քննությանը (այդպիսիք կարող են համարվել օրինակ՝ բժիշկները, փորձագետները, հսկող դատախազներ, հատուկ մարմիններ և այլն)⁷,

Այսպես, «Մաքևոսյանն ընդդեմ Հայաստանի գործով» Եվրոպական դատարանն արձանագրեց արդյունավետ քննության խախտում: Դատարանը գտել էր, որ չնայած նրան, որ տվյալ գործը հարուցվել էր զինվորական դատախազությունում, սակայն գործը հանձնարարվել էր այն նույն քննիչին, որը զբաղվել էր դիմումատուի գործի քննությամբ և վատ վերաբերմունքի վերաբերյալ պետք է քններ ռազմական ոստիկանության այն աշխատակիցների գործողությունները, որոնք ներգրավված էին եղել իրեն հանձնարարված քրեական գործի նախնական քննության մեջ: Այսպիսով՝ դիմումատուի՝ վատ վերաբերմունքի մասին պնդումների քննության արդյունքը պարտադիր հետևանքներ կունենար այդ գործով ապացույցների ընդունելիության վրա, ուստի Դատարանը եկել էր այն եզրահանգմանը, որ չի կարող այդպիսի քննու-

թյունը համարվել անկախության պահանջը բավարարող:

Չնայած նրան, որ ՄԻԵԳ-ն ուղղակիորեն չի բացահայտել «գործնական անկախության» կոնկրետ իմաստը: ՄԻԵԳ-ի նախկին դատավորներից մեկի ձևակերպմամբ⁸, քննությանը մասնակցող անձանց գործնական անկախությունը հետևյալն է. «Նրանք չպետք է ենթակա լինեն իշխանությունների կամ իրադարձությունների հետ առնչություն ունեցողների կողմից որևէ ուղղակի կամ անուղղակի սահմանափակումների, անհարկի ազդեցության, շահադրդման, ճնշման, սպառնալիքի կամ միջամտության: Նույնը վերաբերում է դատախազին, ում հաշվետու են քննությունը կատարող անձինք, և ով պետք է որոշում կայացնի քրեական հետապնդում իրականացնելու համար փաստերի բավարարության մասին [...]: Բացի դրանից՝ պետությունը պետք է ապահովի մարդկային, նյութական և ֆինանսական բավարար միջոցների առկայությունը քննության պատշաճ կազմակերպման համար: Անհարկի ազդեցությունից խուսափելու համար քննիչները պետք է համապատասխան վարձատրություն ստանան»⁹:

Պետք է նշել, որ Եվրոպայի խորհրդի մի շարք պետություններ վերջին շրջանում ստեղծել են ոստիկանների կամ ընդհանրապես հանրային պաշտոնյաների կատարած հանցագործությունները քննող հատուկ մարմիններ: Այդ պետություններից են Կիպրոսը, Դանիան, Անգլիան, Հյուսիսային Իռլանդիան, Նորվեգիան, Շոտլանդիան, Ուելսը, ինչպես նաև Կոսովոյում ստեղծված համակարգը՝ Կոսովոյի ոստիկանության տեսչությունը¹⁰:

Երկրի իրավական համակարգի բնույթից ելնելով՝ նախաքննությունը և հետաքննությունը կարող են իրականացնել դատախազները, հաշտարար դատավորները և դատավորները, մարդու իրավունքների ազգային ինստիտուտները (ինչպիսիք են՝ Օմբուդսմենը և մարդու



իրավունքների հանձնաժողովները) կամ տեսչական կառույցները: Որոշ երկրներ Գլխավոր դատախազության կամ այլ կառույցի ներսում կարող են ստեղծել «խոշտանգումների հետաքննության բաժիններ»¹¹:

Այսպիսով, յուրաքանչյուր պետության համար կարևորվում է ունենալ իրավասու մարմին, որը պետք է զբաղվի խոշտանգումների քննությամբ՝ էական դերակատարություն ունենալով տվյալ գործերի բազմակողմանի և արդյունավետ քննությունն ապահովելու հարցում:

Անդրադառնալով ՀՀ-ում խոշտանգման դեպքերի քննություն իրականացնելու իրավասություն ունեցող մարմիններին, անհրաժեշտ ենք համարում նշել, որ հետաքննությունը ՀՀ-ում իրականացվում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի (այսուհետև նաև՝ քր. դատ. օր.) 56-րդ հոդվածով նախատեսված մարմինների կողմից՝ իրենց վերապահված հանցագործությունների սահմաններում: Ինչ վերաբերում է նախաքննությանը, ապա ՀՀ քր. դատ. օր.-ի 190-րդ հոդվածով կարգավորվել է քննչական մարմինների ենթակայության հարցը, համաձայն որի.

«1. Նախաքննությունը Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 104-164, 166-187, 190.1, 190.2, 191, 192, 195-201, 204, 212-214, 218, 222, 223, 225, 225.1, 227-232, 235-249 (բացառությամբ 235.1 հոդվածի), 251-298 (բացառությամբ 267.1 հոդվածի), 300, 300.1, 300.2, 301, 301.1, 308-328 (բացառությամբ 310.1 հոդվածի), 331-332.5, 336, 341, 341.1, 341.2, 343-345.1, 347-355 հոդվածներով նախատեսված հանցագործությունների վերաբերյալ գործերով կատարում են քննչական կոմիտեի քննիչները:

(...)

6. Նախաքննությունը Հայաստանի Հանրապետության օրենսդիր, գործադիր և դատական իշխանության մարմինների ղեկավար աշխատողների, պետական ծառայություն իրականացնող անձանց՝

իրենց պաշտոնական դիրքի կապակցությամբ հանցակցությամբ կամ նրանց կատարած հանցագործությունների, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 149, 150, 154.1, 154.2, 154.9, 314.2, 314.3, 310.1 հոդվածներով կատարում են հատուկ քննչական ծառայության քննիչները:

Անհրաժեշտության դեպքում Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազը կարող է քննչական այլ մարմինների քննիչների վարույթից վերցնել և հատուկ քննչական ծառայության քննիչների վարույթին հանձնել քրեական գործեր, որոնք առնչվում են սույն մասում թվարկված պաշտոնատար անձանց հանցակցությամբ կամ նրանց կատարած հանցագործություններին, կամ որոնցով այդ անձինք ճանաչված են որպես տուժող, ինչպես նաև ցանկացած այլ քրեական գործ, եթե դրա փաստական հանգամանքներով պայմանավորված՝ առկա է բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննությունը երաշխավորելու անհրաժեշտություն:

6.1. Նախաքննությունը հատուկ քննչական ծառայության ծառայողների՝ իրենց պաշտոնական դիրքի կապակցությամբ հանցակցությամբ կամ նրանց կատարած հանցագործությունների վերաբերյալ գործերով կատարում են ազգային անվտանգության մարմինների քննիչները:

(...)

8. Նախաքննությունը Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 128, 165, 200, 208, 209, 216, 308-310, 314, 315, 333-335, 337-340, 342, 345 և 346 հոդվածներով նախատեսված հանցագործությունների վերաբերյալ գործերով կատարում է նախաքննության այն մարմինը, որի վարույթում գտնվող գործի քննության ընթացքում բացահայտվել է այդ հանցագործությունը, բացառությամբ սույն հոդվածի 6-րդ և 6.1-ին մասերում նշված անձանց կատարած հանցագործությունների վերաբերյալ քրեական գոր-

ծերի:

(...)

10. Տարբեր պետական մարմինների քննիչներին ենթակա հանցագործությունների վերաբերյալ գործերը մեկ վարույթում միացնելու կամ գործի քննության ընթացքում այլ քննիչին ենթակա և սույն հոդվածի ութերորդ մասով չնախատեսված հանցագործության բացահայտման դեպքում ենթակայության հարցը որոշում է դատախազը: Այս կարգը չի տարածվում սույն հոդվածի 6-րդ և 6.1-ին մասերով նախատեսված հանցագործությունների վերաբերյալ քրեական գործերի վրա, որոնցից 6-րդ մասով նախատեսված քրեական գործերի նախաքննությունը կատարում են բացառապես հատուկ քննչական ծառայության քննիչները, իսկ 6.1-ին մասով նախատեսված քրեական գործերի նախաքննությունը կատարում են Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայության քննիչները»:

ՀՀ քր. դատ. օր.-ի 6-րդ հոդվածով սահմանվում է «օրենսդիր, գործադիր և դատական իշխանության մարմինների ղեկավար աշխատողներ» և «պետական ծառայություն իրականացնող անձինք» հասկացությունները: Այսպես՝ «(...)

26.1) *օրենսդիր, գործադիր և դատական իշխանության մարմինների ղեկավար աշխատողներ*՝ Հանրապետության նախագահը, վարչապետը, փոխվարչապետները, պատգամավորները, Մահմանադրական դատարանի դատավորները, դատարանների դատավորները, նախարարները, նրանց տեղակալները, հանրապետության նախագահի աշխատակազմի ղեկավարը, Ազգային ժողովի աշխատակազմի ղեկավարը, վարչապետի աշխատակազմի ղեկավարը, Ոստիկանության պետը և նրա տեղակալները, Ազգային անվտանգության ծառայության տնօրենը և նրա տեղակալները, Պետական եկամուտների կոմիտեի նախագահը և նրա տեղակալները, մարզ-

պետները, նրանց տեղակալները, Երևանի քաղաքապետը, նրա տեղակալները, Հաշվեքննիչ պալատի նախագահը և խորհրդի անդամները, Կենտրոնական բանկի խորհրդի անդամները, Տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի, Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի, Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի անդամները, Կենտրոնական ընտրական հանձնաժողովի անդամները, Վիճակագրական կոմիտեի ղեկավարը և անդամները.

26.2) *պետական ծառայություն իրականացնող անձ*՝ դատախազները, քննչական կոմիտեի ծառայողները, ոստիկանության (բացառությամբ ոստիկանության գործերի), ազգային անվտանգության (բացառությամբ սահմանապահ գործերի և զինված ստորաբաժանումների), հարկային, մաքսային մարմինների, հարկադիր կատարումն ապահովող, քրեակատարողական և փրկարար ծառայությունների պաշտոնատար անձինք.

(...):

Վերոհիշյալ հոդվածների վերլուծությունից ակնհայտ է դառնում, որ ՀՀ-ում խոշտանգման վերաբերյալ գործերի քննությունը կարող է իրականացվել տարբեր քննչական մարմինների կողմից: Նախ՝ օրենսդրական կարգավորումից ուղղակիորեն բխում է, որ այդպիսի լիազորությամբ օժտված են ինչպես քննչական կոմիտեի, այնպես էլ հատուկ քննչական ծառայության (այսուհետև նաև՝ ՀԶԾ) քննիչները, իսկ հատուկ քննչական ծառայության քննիչների կողմից նման արարք կատարելու դեպքում գործի քննությունն իրականացնելու իրավասությունը պատկանում է ազգային անվտանգության քննիչներին: Ինչպես նկատում ենք, խոշտանգումների քննությունն իրականացնելու իրավասությամբ օժտված են տարբեր քննչական մարմիններ և առկա չէ այն ակախ մարմնի կողմից իրականացնելու օրենսդրի հստակ կամահայտնություն: ՀՀ հատուկ քննչական ծառայությունում ներկայումս

ՍԵՊՏԵՄԲԵՐ - ՀՈԿՏԵՄԲԵՐ 2019 9 - 10 (243-244)

ԴԱՏԱԿԱՆ
Իշխանություն



գործում է խոշտանգումների և մարդու դեմ ուղղված հանցագործությունների քննության առանձին վարչություն, որում ընդգրկված են մասնագիտացված քննիչներ, որոնք իրականացնում են նաև խոշտանգումների քննություն, սակայն միայն այն մասով, ինչը գտնվում է իրենց իրավասությունների ոլորտում: Այլ խոսքով՝ ՀՀ հատուկ քննչական ծառայությունում առանձին վարչության գոյությունը չի բացառում քննչական կոմիտեի քննիչների կողմից խոշտանգումների փաստի քննության հնարավորությունը:

Այնուամենայնիվ, պետք է նշել նաև այն մասին, որ ՀՀ հատուկ քննչական ծառայության ստեղծումից ի վեր Եվրոպայի խորհրդի խոշտանգումների կանխարգելման կոմիտեի (այսուհետ նաև՝ ԽԿԿ) կողմից տրված զեկույցներում չի արձանագրվել անկախ մարմին չունեցող բացակայության մասին: Այլ կերպ՝ ԽԿԿ-ն իր զեկույցներում արժևորել է ՀՀ հատուկ քննչական ծառայության գոյությունը, այսպես՝ «2007 թվականի վերջերին ստեղծվել է առանձին մարմին՝ հատուկ քննչական ծառայությունը, որը մասնագիտացած է պետական պաշտոնատար անձանց կողմից հնարավոր չարաշահումների հետ կապված գործերի քննության հարցերում: 2010 թվականի այցի ժամանակ ՀՔԾ-ի աշխատակազմը բավարար չափով համալրված էր և հնարավորություն ուներ օգտվելու այլ մարմինների աշխատողների ծառայություններից՝ իր ղեկավարության ներքո: Այցը հնարավորություն է ընձեռել ուսումնասիրելու, թե ինչպես է ՀՔԾ-ն քննություն իրականացնում ոստիկանության կողմից անազատության մեջ պահվող անձանց նկատմամբ վատ վերաբերմունքի դրսևորման մեղադրանք պարունակող գործերի առնչությամբ»¹²:

Ավելին, ԽԿԿ-ն 2015 թվականի հոկտեմբերին Հայաստան կատարած պարբերական այցի ժամանակ արձանագրել է, որ ձեռնարկվել են որոշ քայլեր՝ ուղղված ՀՔԾ-ի անկախության խթանմանը, ինչ-

պես նաև վատ վերաբերմունքի ձևերի արդյունավետ քննության ուժեղացմանը: Չեկույցում կարևորել է նաև այն, որ ՀՔԾ-ի գործունեությունն ավելի հասանելի է դարձնել հասարակության անդամների համար, մասնավորապես՝ նրանք բողոքները կարող են ներկայացնել ինչպես անմիջապես ծառայություն ներկայացնելով, այնպես էլ հեռախոսով, էլեկտրոնային փոստով կամ ՀՔԾ-ի կայքի միջոցով: Այդուհանդերձ, ԽԿԿ-ն նաև տվյալ զեկույցում արձանագրել է, որ ձերբակալված անձանց վերաբերյալ հայտնաբերված վնասվածքների մասին (ՁՊՎ-ներում կամ ՔԿՀ-ում) տեղեկությունները շարունակում են փոխանցվել քրեական գործով վարույթն իրականացնող քննիչին, հսկող դատախազին, բայց ոչ Հատուկ քննչական ծառայություն: Հատուկ քննչական ծառայության քննիչները մեխանիկորեն չեն ներգրավվում քննությանը՝ ոստիկանության աշխատակիցների կողմից ենթադրյալ վատ վերաբերմունքի դրսևորման վերաբերյալ բողոքների կամ դրա վերաբերյալ ցանկացած այլ տեղեկության առկայության դեպքում¹³:

ԽԿԿ-ի զեկույցին համահունչ 2017 թվականի հուլիսի 23-ին դատախազությունը կոլեգիայի նիստով արձանագրեց, որ անկախ մարմնի կողմից քննությունն իրականացնելու չափանիշը խստագույնս պահպանելու անհրաժեշտությամբ պայմանավորված, հաշվի առնելով Եվրոպայի խորհրդի խոշտանգումների կանխարգելման կոմիտեի դիտարկումները, անհարժեշտ է վերանայել ՀՀ դատախազության կոլեգիայի 2012 թվականի օգոստոսի 10-ի և 2008 թվականի փետրվարի 8-ի որոշումները, ինչպես նաև ՀՀ գլխավոր դատախազի 2008 թվականի ապրիլի 10-ի հանձնարարականը¹⁴ պարտավորեցնելով ՀՀ ոստիկանության համակարգի ՁՊՎ-ներից և ՀՀ ԱՆ ՔԿՀ-ներից այդ հիմնարկներ մարմնական վնասվածքներով անձանց ընդունվելու վերաբերյալ իրազեկումներ ստացած վարույթն իրականացնող մարմիններին,

այդ թվում՝ հսկող դատախազներին, իրագեկնման ուսումնասիրությամբ պարզելով, որ ձերբակալված կամ կալանավորված անձը վնասվածքներն ստանալու հանգամանքների շուրջ հայտարարել է այդպիսիք խոշտանգման արդյունքում պատճառավերու մասին, անհապաղ իրագեկնումն ուղարկել չէ հատուկ քննչական ծառայություն՝ առանց դրա առթիվ նյութեր նախապատրաստելու:

Այսպիսով՝ Կոլեգիան այդ հարցի կապակցությամբ երկու կարևոր դիրքորոշում ձևավորեց.

- երբ վարույթն իրականացնող մարմինը, այդ թվում՝ հսկող դատախազը, մարմնական վնասվածքների վերաբերյալ իրագեկնման ուսումնասիրությամբ պարզում է, որ ձերբակալված կամ կալանավորված անձը վնասվածքներ ստանալու հանգամանքների շուրջ հայտարարել է այդպիսիք խոշտանգման արդյունքում պատճառավերու մասին, անհապաղ նշանակել դատաբժշկական փորձաքննություն և անմիջապես նախապատրաստված նյութերը չէ դատախազության համապատասխան ստորաբաժանման ղեկավարի ուղեկցական գրությամբ ուղարկել չէ գլխավոր դատախազին՝ չէ չՔԾ ուղարկելու հարցը քննարկելու համար,

- երբ իրագեկնման առթիվ նյութեր նախապատրաստելու ընթացքում պարզվում է, որ ձերբակալված կամ կալանավորված անձի մարմնական վնասվածքներն ակնհայտ չեն համապատասխանում այն դեպքի հանգամանքներին, որի առթիվ քննվող քրեական գործով անձը ձերբակալվել կամ կալանավորվել է, իսկ վերջինս վնասվածքների առաջացման հանգամանքների վերաբերյալ բերում է անարժանահավատ և անհեթեթ պատճառաբանություններ, նախապատրաստված նյութերը նույն ընթացակարգով՝ չէ դատախազության համապատասխան ստորաբաժանման ղեկավարի ուղեկցական գրությամբ ուղարկել չէ գլխավոր դատախազին՝ չէ չՔԾ ուղարկելու հարցը քննարկելու միջնորդությամբ¹⁵:

Կարելի է արձանագրել, որ 2017 թվականի դատախազության կոլեգիայի որոշմամբ փորձ է կատարվել գործնականում առաջ եկած խնդրին տալ որոշակի չափով լուծում, սակայն անհրաժեշտ ենք համարում նշել, որ կոլեգիայի որոշումը կրում է խորհրդատվական բնույթ: «Դատախազության մասին» օրենքի 22-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ դատախազության կոլեգիայի որոշումները կենսագործվում են գլխավոր դատախազի հրամաններով: Տվյալ որոշման մասով առկա չէ գլխավոր դատախազի հրաման, ուստի այն չի կարող համարվել պարտադիր բնույթ ունեցող և գործնականում միշտ չէ, որ ղեկավարվում են դատախազության կոլեգիայի որոշումներով: Այս ամենը վկայում է այն մասին, որ օրենսդրությամբ սահմանված կարգավորումը չի համապատասխանում պետության կողմից ստանձնած պարտավորություններին, ինչն էլ առաջ է բերում միջազգային մարմինների կողմից տարբեր առիթներով խախտումներ արձանագրելու պրակտիկան:

Բանն այն է, որ գործող օրենսդրությամբ ո՛չ հետաքննության, ո՛չ էլ նախաքննության մարմինների համար առանձնացված չէ խոշտանգման գործերով քննություն իրականացնող առանձին մարմին, այսինքն՝ ենթակայության հարցերը չեն ստացել ճիշտ կարգավորում: Այս առումով, կարծում ենք, անհրաժեշտություն է առաջանում կատարել օրենսդրական փոփոխություն և չէ քրեական օրենսգրքի 309.1-րդ հոդվածի ենթակայությունը վերապահել բացառապես հատուկ քննչական ծառայությանը, բացառությամբ այն դեպքերի, երբ մնան արարք կատարվում է հենց չՔԾ-ի քննիչների կողմից, վերջինիս կարգավորումն արդեն իսկ սահմանված է գործող օրենսդրությամբ:

Բացի դրանից՝ Վ. Ենգիբարյանն իրավացիորեն գտել է, որ անհրաժեշտ է չէ հատուկ քննչական ծառայության քննիչների ենթակայությանը վերապա-



հել խոշտանգման համար քրեական պատասխանատվություն նախատեսող 309.1-րդ հոդվածով հանցագործությունների վերաբերյալ քրեական գործերը՝ նկատի ունենալով այն, որ հիշյալ հոդվածով նախատեսված հանցագործությունը կարող է կատարվել ինչպես պետական ծառայություն իրականացնող պաշտոնատար անձի, այնպես էլ պետական մարմնի անունից հանդես գալու իրավասություն ունեցող այլ անձի կողմից կամ նրա դրդմամբ, կարգադրությամբ կամ գիտությամբ¹⁶:

Պետք է նաև նշել այն մասին, որ ներկայումս իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայքէջում ([www. E-draft.am](http://www.E-draft.am)) շրջանառության մեջ է դրվել հակակոռուպցիոն ռազմավարությունը, որի 68-րդ կետի 5-րդ ենթակետով նախատեսվում է Հատուկ քննչական ծառայության խոշտանգումների և մարդու դեմ ուղղված հանցագործությունների քննության վարչության ... գործառույթները համապատասխան հաստիքներով և գործիքակազմով փոխանցել Քննչական կոմիտեին: Վերոհիշյալ ռազմավարությամբ նախատեսվում է նոր քննչական մարմնի ստեղծում, որը զբաղվելու է բացառապես կոռուպցիոն բնույթի հանցագործությունների քննությամբ և ստացվում է, որ հակակոռուպցիոն կոմիտեի ստեղծմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 309.1 հոդվածի (այսինքն՝ խոշտանգման) քննությունն անցնելու է բացառապես քննչական կոմիտեի իրավասությանը:

Խոշտանգումների քննությունն ամբողջությամբ քննչական կոմիտեին փոխանցելու վերաբերյալ հակակոռուպցիոն ռազմավարությամբ նախատեսված և ապագայում ակնկալվելիք վերոհիշյալ փոփոխությունն անընդունելի է և չի կարող ողջունվել մեր կողմից: Ինչպես Մարդու իրավունքների եվրոպական դատարանն՝ իր նախադեպային իրավունքում¹⁷, այնպես էլ խոշտանգումների դեմ պայքարի միջազգային մարմինները¹⁸ բազմիս կարևորել են խոշտանգումների

և վատ վերաբերմունքի այլ ձևերի արդյունավետ քննությունը, որի իրականացման համար որպես իրական երաշխիք է անկախ և անկողմնակալ մարմինների կողմից իրականացված քննությունը: Այս ամենի համատեքստում, գտնում ենք, որ խոշտանգումների քննությունը բացառապես քննչական կոմիտեի իրավասությանը վերապահելու հանգամանքն անմիջականորեն ազդում է տվյալ հանցագործության արդյունավետ քննության վրա և չի կարող ապահովել պետության պոզիտիվ պարտականությունը:

Բանն այն է, որ անկախ այն հանգամանքից, թե այդ դեպքում տվյալ քննչական մարմինն ինչպիսի ջանասիրություն կցուցաբերի տվյալ գործն անհապաղ բացահայտելու, լրիվ և բազմակողմանի քննություն ապահովելու հարցում, ի սկզբանե այդ քննությունը տապալված կհամարվի, քանի որ անկախության գործոնը նման դեպքում երաշխավորված չի լինի: Այլ կերպ՝ քննչական կոմիտեն անկախ մարմին չի կարող համարվել և իրականացնել իր քննիչների վերաբերյալ հարուցված քրեական գործերի քննությունը: Անաչառ քննություն իրականացնելու հարցին անդրադարձել է Վճռաբեկ դատարանը «Հ. Ներսիսյանի և Է. Ամիրջանի վերաբերյալ գործով» և ձևավորել է իրավական դիրքորոշում այն մասին, որ օբյեկտիվ քննություն կատարելու պահանջը վերացական բնույթ կկրի, եթե չապահովվի քրեական գործի քննությունն իրականացնող մարմնի տվյալ գործի նկատմամբ գերատեսչական հետաքրքրության բացակայությունը, կողմերից մեկի և գործը քննող կառույցի շահերի համընկման անթույլատրելիությունը: Հիշյալի հաշվառմամբ, Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ այն դեպքերում, երբ քրեական գործով որպես տուժող է ճանաչված քննչական մարմնի ծառայողը կամ վերջինս հանդիսանում է հանցավոր ոտնձգությունից տուժած անձ անթույլատրելի է տվյալ գործի քննության իրականացումն այդ քննչական մարմնի

կողմից, հակառակ դեպքում չի երաշխավորվի գործի անաչառ քննության իրականացումը՝ կասկածի տակ դնելով ձեռք բերված ապացույցների թույլատրելիությունը¹⁹: Ինչպես նկատում ենք Վճռաբեկ դատարանն օրենսդրական նորմերի վերլուծության արդյունքում հանգել է այն եզրակացությանը, որ գործի քննություն իրականացնող մարմնի և գործով շահագրգիռ անձի շահերի համընկնումն անթույլատրելի է, այսինքն՝ գործի քննություն իրականացնող մարմինը պետք է զերծ մնա իր աշխատակցի կամ նախկին աշխատակցի վերաբերյալ եղած գործերով քննություն իրականացնելուց:

Վերոհիշյալ վերլուծությունների լույսի ներքո, ամփոփելով, գտնում ենք, որ ՀՀ-ում անհրաժեշտ է ստեղծել այնպիսի մի անկախ, ունիվերսալ մարմին, որը օժտված կլինի խոշտանգումների գործերի քննություն և խոշտանգումների բացահայտման նպատակով ստուգումներ իրականացնելու իրավասությամբ: Այն պետք է օժտված լինի բացարձակ անկախությամբ ինչպես ինստիտուցիոնալ, այնպես էլ ֆինանսական առումով, և անկախ պետք է լինի բոլոր պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից, հատկապես՝ դատախազաքննչական և դատական, ինչպես նաև օրենսդիր և գործադիր մարմիններից: Քննության անկախությունը, ամբողջականությունը և արդյունավետությունն ապահովելու համար անհրաժեշտ է այդ մարմնի իրավասությանը վերապահել ոչ միայն նախաքննություն, այլ նաև հետաքննություն իրականացնելու լիազորություն, այսպես, չնայած այն հանգամանքին, որ հետաքննությունը օրենսդրությամբ պարտադիր փուլ չի համարվում, այնուամենայնիվ հաճախ քննչական մարմիններին օժանդակելու համար անհրաժեշտություն է առաջանում ապավինել այլ իրավապահ մարմինների ուժերին, մասնավորապես՝ օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմիններին: Եվ որպեսզի զերծ պահենք ան-

կախ մարմնի որևէ ձևով առնչությունն այլ իրավապահ մարմինների հետ, անհարժեշտ է այդ մարմնում ներգրավված լինեն ոչ միայն քննիչներ, այլև՝ օպերատիվ-հետախուզության աշխատակիցներ: Մա հնարավորություն կտա տվյալ մարմնին գործել լիարժեք անկախությամբ և չունենալ որևէ գործառույթային կապվածություն այլ մարմինների հետ: Միևնույն ժամանակ անհրաժեշտ ենք համարում, որ այդ մարմինն ունենա համապատասխան մասնագիտացված, անկախ փորձագետներ, որոնք կբաղվեն անհապաղ և արդյունավետ փորձաքննությունների իրականացմամբ, ինչպես նաև առանձին բժիշկ-փորձագետներ: Մեր խորին համոզմամբ այդպիսի մարմինը պետք է ունենա նաև դիտորդների հատուկ խումբ, որն օժտված կլինի անձի ազատությունը սահմանափակող մարմիններ ու հիմնարկություններ պարբերաբար այցելություններ իրականացնելու և եղած խախտումներ արձանագրելու հնարավորությամբ: Փաստորեն այն կհամարվի ունիվերսալ մի մարմին, որն իր ամբողջական մոդելով կլինի աննախադեպ ինչպես Հայաստանի Հանրապետության, այնպես էլ ամբողջ աշխարհի համար: Նման մոդելի ներդրումն արժատախիլ կանի խոշտանգման կամ վատ վերաբերմունքի այլ ձևերի նման մոդկալի երևույթները, ինչպես նաև կբարձրացնի խոշտանգումների քննության արդյունավետության որակը և վերջապես հնարավորություն կընձեռնի ամբողջական ծավալով պայքար մղել խոշտանգումների դեմ:

Ինչ վերաբերում է դատախազներին, ապա կարծում ենք, որ անհրաժեշտություն չի առաջանում նրանց ևս ընդգրկել տվյալ ունիվերսալ մարմնի մեջ, բացի որ քննության նկատմամբ հսկողություն իրականացնող մարմինը ևս պետք է անկախ լինի տվյալ կառույցից: Այս մասով բավարար կարող է համարվել ՀՀ գլխավոր դատախազությունում համապատասխան ոլորտի մասնագետներ առանձնացնելը:



- 1 Տե՛ս Ստամբուլյան արձանագրություն. Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի մասով արդյունավետ քննության իրականացման և փաստաթղթավորման մասին ձեռնարկ, Երևան, 2015, կետեր 78 և 81: Անկախության հարցին ամրապարձել է նաև ԽԿԿ-ն իր գործունեության մասին 14-րդ ընդհանուր գեկույցում. CPT/Inf (2004) 28, կետ 32:
- 2 Տե՛ս ՀՀ հատուկ քննչական ծառայություն. Խոշտանգման գործերով քննության կազմակերպման և իրականացման ուղեցույց, գիտ. խմբ. Վ. Շ ահիյան, Երևան, 2014, էջեր 30-31:
- 3 Տե՛ս Zalyan and other v. Armenia, 2016 թվականի մարտի 17-ի վճիռ, գանգատներ թիվ 36894/04 և 3521/07, կետ 268: Oğur Ogur v. Turkey, 1999 մայիսի 20-ի վճիռ, գանգատ թիվ 2 1594/93, կետ 91, Mehmet Emin Yüksel v. Turkey, 2004 թվականի հուլիսի 20վճիռ, գանգատ թիվ 40154/98, կետ 37 և այլն:
- 4 Տե՛ս Mikiashevili v. Georgia 2012 թվականի հոկտեմբերի 9 վճիռ, գանգատ թիվ 18996/06:
- 5 Տե՛ս Aktas v. Turkey, 2003 թվականի ապրիլի 24-ի վճիռ, գանգատ թիվ 24351/94:
- 6 Տե՛ս Matevosyan v. Armenia ,2017 թվականի սեպտեմբերի 14-ի վճիռ, գանգատ թիվ 52316/09: Rehbock v. Slovenia, 2000 թվականի նոյեմբերի 28-ի վճիռ, գանգատ թիվ 29462/95 և այլն:
- 7 Տե՛ս Mikheev v. Russia, 2006 թվականի հունվարի 26-ի վճիռ, գանգատ թիվ 77617/01, Barabanshchikov v. Russia, 2009 թվականի հունվարի 8-ի վճիռ, գանգատ թիվ 36220/02 և այլն:
- 8 Egbert Myjer, Investigation into the use of lethal force: standards of independence and impartiality, in: The Right to Life under Article 2 of the European Convention on Human Rights. Twenty Years of Legal Developments since McCann v. the United Kingdom. Wolf Legal Publishers, Oisterwijk, 2016, էջեր 115-132:
- 9 Տե՛ս Ս. Առաքելյան, Ջ. Կոզմա, Կյանքի իրավունքին, խոշտանգումների և վատ վերաբերմունքի այլ ձևերի արգելքին առնչվող գործերի քննություն, Երևան, 2016, էջ 95:
- 10 Տե՛ս Ս. Առաքելյան, Ջ. Կոզմա, նշվ. աշխ., էջ 93:
- 11 Տե՛ս Ք. Ֆոլի, Պայքար խոշտանգումների դեմ/ ձեռնարկ դատախազների և դատավորների համար, թարգմանություն՝ Լ. Պետրոսյան, Մեծ Բրիտանիա, 2003, էջ 72:
- 12 Տե՛ս ԽԿԿ-ի Հայաստան կատարած այցելության վերաբերյալ գեկույց, 2010 թվականի դեկտեմբերի 1 / CPT (2010) 82, կետ 21:
- 13 Տե՛ս ԽԿԿ-ի Հայաստան կատարած այցելության վերաբերյալ գեկույց, 2015 թվականի հոկտեմբերի 5-15/ CPT/Inf (2016) 31, կետեր 22, 25:
- 14 Տվյալ որոշումներով և հանձնարարականով սահմանված էր, որ ձերբակալված և կալանավորված անձանց պահելու վայրեր ընդունելիս կատարված բուժզննության ընթացքում հայտնաբերված մարմնական վնասվածքների վերաբերյալ ստացված իրազեկումներն անհրաժեշտ է դիտել որպես ՀՀ քր. դատ. օր.-ի 176-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված՝ գործ հարուցելու առիթ, ուստի դրանց ընթացքը լուծել հիմնական վարույթից առանձնացված նյութերի նախապատրաստման շրջանակում՝ դրանցից յուրաքանչյուրի դեպքով կայացնելով ՀՀ քր. դատ. օր.-ի 181-րդ հոդվածով նախատեսված որոշումներից մեկը կամ համապատասխան հիմքերի առկայության դեպքում ՀՀ հատուկ քննչական ծառայության իրավասությանը վերաբերող նյութերը և քրեական գործերը, ՀՀ քր. դատ. օր.-ի 190-րդ հոդվածի կարգով ենթակայության հիմքը պարզելուց հետո, դատախազի ուղեկցական գրությամբ պետք է ուղարկել ՀՀ գլխավոր դատախազին, իսկ ուղարկված նյութերին և քրեական գործին վերաբերող նյութ գրագրություններն անհրաժեշտ է ամմիջականորեն ուղարկել ՀՀ հատուկ քննչական ծառայություն:
- 15 Տե՛ս Դատախազության կողմից 2017 թվականի հուլիսի 23-ին նիստի թիվ 2-րդ արձանագրություն, կետեր 7-8, 15:
- 16 Տե՛ս Վ. Եմգիբարյան, Վատ վերաբերմունքի գործերի քննության առանձնահատկությունները միջազգային չափանիշների, ՄԻԵԾԴ-ի նախադեպային իրավունքի, ինչպես նաև ազգային օրենսդրության և դատական պրակտիկայի լույսի ներքո, Երևան, 2018, էջ 125:
- 17 Տե՛ս Matevosyan v. Armenia 2017 սեպտեմբերի 14-ի վճիռ, գանգատ թիվ 52316/09, կետ 74, Zalyan and other v. Armenia, 2016 թվականի մարտի 17-ի վճիռ, գանգատներ թիվ 36894/04 և 3521/07, կետ 268 և այլն:
- 18 ԽԿԿ-ի գործունեության մասին 14-րդ ընդհանուր գեկույց, CPT/Inf (2004) 28, կետ 32:
- 19 Տե՛ս ՀՀ Վճռաբեկ դատարանի՝ Հ. Ներսիսյանի և Է. Ամիրյանի վերաբերյալ 2017 թվականի նոյեմբերի 15-ի, թիվ ՏԴ2/0005/01/16 քրեական գործ, կետ 20:

RESUME - ԱՄՓՈՓՈՒՄ

INVESTIGATING BODIES OF TORTURE CASES AND THEIR INDEPENDENCE

E. Avagyan

Applicant of the Chair of Criminal Processing and Criminalistics of YSU Faculty of Law

It is the duty of the State to combat torture and to respond promptly to any violation of human rights and to carry out an effective investigation by restoring violated human rights.

The work is dedicated to the independence of the competent authorities investigating torture. Within the scope of this article, the author referred, in particular, to the number of investigating bodies in the Republic of Armenia regarding torture, and presented the extent to which their investigation complies with the guarantee of independence provided for by European standards. Summing up, the author proposed to create an independent and universal body that would combat torture and investigate these cases.

Keywords: *torture, effective investigation, official, special investigative service, independent body, impartial, immediate, complete.*

СЛЕДСТВЕННЫЕ ОРГАНЫ ПО ДЕЛАМ О ПЫТКАХ И ИХ НЕЗАВИСИМОСТЬ

Э. Авагян

Соискатель кафедры уголовного процесса и криминалистики юридического факультета ЕГУ

Государство обязано бороться с пытками и оперативно реагировать на любые нарушения прав человека и проводить эффективное расследование путем восстановления нарушенных прав человека.

Работа посвящена независимости компетентных органов расследующих пытки. В рамках этой статьи автор ссылался, в частности, на число следственных органов в Республике Армения в отношении пыток, и представил степень, в которой проведенное ими расследование соответствует гарантии независимости, предусмотренной европейскими стандартами. Подводя итог, автор предложил создать независимый и универсальный орган, который боролся бы с пытками и занимался расследованиями этими делами.

Ключевые слова: *пытки, эффективное расследование, должностное лицо, специальная следственная служба, независимый орган, беспристрастными, немедленно, полный.*

Բանալի բառեր - *խոչընցոում, արդյունավեր քննություն, պաշտոնավար անջ, հարույ քննչական ծառայություն, անկախ մարմին, անկողմնակալ, անհապաղ, ամոռչական:*

Է. Ավագյան - ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի քրեական դատավարության և կիրմնալիս-տիկայի ամբիոնի հայցորդ, էլ. փոստ՝ avagyan-emma@mail.ru

Ներկայացվել է խմբագրություն՝ 23.09.2019, տրվել է գրախոսության՝ 23.09.2019, երաշխավորվել է իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Վ. Ենգիբարյանի կողմից, ընդունվել է տպագրության՝ 24.10.2019

ԱՄՓՈՓՈՒՄ - ՀՈԿՏԵՄԲԵՐ 2019 9 - 10 (243-244)

ԴԱՏԱԿԱՆ
Իշխանություն